# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 25 | Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Աշնանային-ձմեռային բաճկոն՝ ուսադիրներով (կանացի) (Ձև 9): Պատրաստվում է մուգ կապույտ գույնի, անջրաթափանց, 50-70 միկրոն հաստությամբ կտորից (51% պոլիեսթեր, 49% բամբակ, 215 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%)՝ կազմված ուղիղ ուրվագծով, ձախ լանջափեշը 5 կոճակով կոճկվող գաղտնակար հանգույցով, ձախից կոճկվող, փեշի սկզբից մինչև օձիք, ներկարված 1 սմ հաստությամբ տաք ներդիրից և հանվող տաք ներդիրից (3 սմ հաստությամբ), տաք ներդիրները թևքերով են, որոնք ամրացվում են կայծակնաճարմանդով, ոչխարի մուգ կապույտ մորթուց հանովի օձիքից (օձիքի լայնքը 12 սմ) և տաք ներդիրով գլխանոցից: Թիկնամասը և լանջափեշերը կրծքամասում և ուսամասում 2 կտրվածքով են: Միացման տեղով անցնում է 2,5 մմ լայնքով մուգ կարմիր երիզ: Թևքանիքի վրա անցնում է 2,5 մմ մուգ կարմիր եզրագիծ: Երկու լանջափեշի վրա առկա են 3,5 սմ թեքությամբ կայծակնաճարմանդով կոճկվող ներկարված գրպաններ: Աստառը մետաքսյա է (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), բաճկոնն ունի ձախ կողմում կոճկվող ծոցագրպան: Ծոցագրպան կարվում է նաև ներդիրի վրա, իսկ գոտկատեղում և ներքում՝ թաքնված գոտկապարան: Բաճկոնը հանվող ուսադիրներով է, որոնք էլ ունեն 2-ական ամրակներ: Գլխանոցը հանովի է և պահվում է մեջքի մասում՝ օձիքի տակ ներկարված գրպանում, որը կայծակնաճարմանդով է: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշ՝ նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Բաճկոնը կարվում է |

| | |
|---|---|
| | ծնկներից 15-20 սմ բարձրությամբ: Նախքան բաճկոնների պատրաստումը բաճկոնների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Բաճկոնների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև բաճկոնների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 25 | |